Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 431 — ԵՐԵՔՇԱԲԹԻ 11 ՅՈՒՆԻՍ 1885 — (Ն. Տ.) 23 ՅՈՒՆԻՍ 1885 — 10 ՐԱՄԱԶԱՆ 1302

40 ՓԱՐԱ.

ԳԱՅՄԱՆ.

Դրամագլուխ տարի մէկ անգամի համար 3 գրուշ՝ երկու անգամի համար 2 գրուշ է. առ դիր անգամներու համար, զատ սակարկութիւն կրլայ։

Օրագրոյս փոխարինեալ համարակ կամ որ և իցէ գրութիւն պէտք է ուղղել

«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԹՈՒՂԱԹԱՐԱՏՈՒՆ՝ Ղալաթիա, Նորատունկեան խան։

Իսկ գաւառներէն հեռագրել հասցէին՝

(Մնացեալ) գտնուի նորատունկեան դրամագլուխ

غزته‌سی اداره‌سی

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY, Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ	համար	Տարեկան	գահեկան	արժէք 200
»	»	Վեցամեայ	»	» 100
»	»	Եռամեայ	»	» 50
Գաւառաց համար և տեղական թղթատարով տարեկան				» 240
Գաւառաց համար և տեղական թղթատարով վեցամեայ			»	» 120
Օտար երկիրներ		Տարեկան	Ցրաչք	 56
»	»	Վեցամեայ	»	 28

Դուրս ղրկուած լրագրոց համար ծախքը Ընդհանրութեան վրայ է։

Խմբագրութեան ղրկուած ձեռագրեր համակ կամ գրութիւն ետ չտրուիր։

Ցանուցմունք կընդունուին ԻՍԴԼԲԷՆ ԷՃԷՆՍԻ գործակալութեան ձեռամբ, Բարաքէօյ, Տէյիրմէն խան

Կ. ՊՈԼԻՍ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 10 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱԴՆԱՊՆ Ը'ՆԴԼԻԱ

Անգլիոյ քաղաքական կամ նախարարական տագնապին վրայ Լրագրոյս վերջին թիւերով հրատարակուած յօդուածները տեսնելէ յետոյ, ընթերցողք անշուշտ չզարմացան Հեռագրոյն երէկ տուած կարեւոր լուրին վրայ թէ Սալիսպըրի Մարքիզը դժուարութիւն կը կրէ իշխանութեան վրայ հաստատելու իւրնոր ակամ Նախարարութիւն։ Ցառաջագոյն բաւական մանրամասնութեամբ բացատրած էինք թէ, քանի որ Ազատականաց մի մասին ձեռնպահութեամբ և Պահպանողականաց ու Իռլանտացւոց միութեամբ Գ. Կլատստոնի Նախարարութիւն յաղթուած էր Ելմտացոյցի խնդրոյն մէջ, Ազատական Նախարարութիւնը չէր կրնար պաշտօնի վրայ մնալ. և քանի որ, հակառակ այս դիպուածական քուէարկութեան, այժմեան Երեսփոխանական ժողովոյն մէջ իրական մեծամասնութիւնն Ազատականաց կողմը կը մնար միշտ, Պահպանողականը դժուարութիւն պիտի կրէին իշխանութեան անցնելու և գործերը վարելու. և թէ, վերջապէս, այս անել կացութեան ճշմարիտ լուծումը պիտի տային առաջիկայ Ընդհանուր Ընտրութիւնք միայն, որք պիտի որոշեն մէկ կամ միւս Կուսակցութեան վերջնական յաղթանակը։

Թէև, այս տեսութեամբ, Հեռագրոյն երէկ մեզ բերած լուրերն ոչինչ ունէին անակնկալելի և զարմանալի, հարկ կը համարինք նոր ծանօթութիւններ տալ քանի մը նոր պարագայից վրայ, մանաւանդ թէ երեկի Սուրհանդակն զմեզ կարող կ'ընէ այս նկատմամբ առաւել որոշապէս խօսելու։

* * *

Հեռագիրը կը խօսի ինչ ինչ պայմաններու վրայ զոր Սալիսպըրի Մարքիզը դրեր է իշխանութիւն վարելու համար, և զոր Գ. Կլատստոն տակաւին ընդունած չլինելով, Պահպանողական Նախարարութեան շարունակումը տարակուսելի կը մնայ եղեր։ Ի՞նչ են այս պայմանք, և ի՞նչ իրաւունք ունի Պահպանողական Նախարարութիւն մը՝ պայմաններ դնելու իւր Ազատական նախորդաց վրայ։—

Ըսինք վերեւ թէ, քանի որ Երեսփոխանութեան մէջ մեծամասնութիւնն Ազատականաց կողմն է միշտ, Պահպանողական Նախարարութիւն մը դժուարութիւն պիտի քաշէր գործերը վարելու։ Բայց պէտք է վերջապէս որ Կուսակցութիւն մը ստանձնէ Տէրութեան գործերը վարելու հոգն։ Ազատականք կը հրաժարին զի պզտիկ ինկան քուէշշրջին ուրեմն, և Ազատական Ընդդիմադիր Կուսակցութիւնը պարտական կը մնայ Պահպանողական Նախարարութեան ազակցելու։

Բայց, Հայրենեաց սիրոյն համար կուսակցական ոգին պահ մը մարելու և գաղափարաց ու զգացմանց զիջում ընելու այս բարոյական պարտաւորութիւն բացարձակ է արդեօք։ Աշխարհի ամենէն ազատ մեկ ազգին օրէնքներն ու սովորութիւններն անշուշտ չեն պահանջեր գաղափարաց ու զգացմանց բռնադրօսիկ զոհողութիւն մը։ Ուստի, անգիր պայմանագրութիւն մ'է թէ Ընդդիմադիրք կարեւոր սկզբունքներ չպիտի զոհեն, և Գործադիր իշխանութիւնն ևս անոնցմէ չպիտի պահանջէ շատ ծանր զոհողութիւններ։ Խնդիրն ուրեմն գնահատութեան ու փոխադարձ համաձայնութեան գործ մ'է։ Գ. Կլատստոն կը զդայ թէ պարտի մինչեւ մեկ ստիճան զգուշանալ կուսակցական մի խիստ պայքար մղելէ ընդդէմ Պահպանողական Նորակազմ Նախարարութեան, արդի Խորհրդարանին մնացեալ աւուրց մէջ։ Եթէ գործն այդպիսով լմընար, Հեռագրին երեկի լուրերը չէինք ունենար. բայց սկզբունքի կարեւոր խնդիր մը կայ հրապարակին վրայ, արտասովոր խնդիր մը, զոր ճշդիւ հարկ է լուծէ օրուան Նախարարութիւն, ո'ր Կուսակցութենէ ևս բաղկացած լլինի։ Իռլանտան ի'նչ եղանակաւ կառավարելու խնդիրն է այս։ Ելմտացոյցի քուէարկման համար Գ. Կլատստոն կրնայ դիւրութիւն տալ Պահպանողականներուն. բայց դժուար չէ մակարերել թէ նոյն ազատութիւնը չի կրնար ընծեռել իւր հակառակորդաց, ի մասին սկզբան այնպիսի կընճռուալից խնդրոյ որոյ վրայ ինքն իսկ անհամաձայն գտնուած էր իւր հետեւողաց մէկ մասին հետ։

* * *

Այս նկատողութեամբք աւարիկ կատարելապէս կը հասկնանք թէ Պահպանողական Նախարարապետն իշխանութիւն վարելու համար պայման կը դնէ Ազատականաց առժամանակեայ ազակցութիւնը, բայց թէ Գ. Կլատստոն չի կրնար ընդունիլ Սալիսպըրի Մարքիզին դրած բոլոր պայմանները։ Սակայն մեր խոնարհ կարծեօք, Հեռագիրը շատ չանցած պիտի իմացունէ մեզ թէ երկուց կուսակցութեանց միջեւ առժամեայ կարգադրութիւն մը կրցած է լլինել, որ այժ պիտի ունենայ մինչեւ առաջիկայ Ընտրութիւններն։ Այսպէս խորհելու համար մեզ ունինք սա գէշ-խաւոր պատճառ թէ անհամաձայնութիւնը պիտի վնասէր երկուց Կուսակցութեանց ևս, գրեթէ հաւասարապէս։ Անհամաձայնութեան հետեւանքը պիտի լլիներ Պահպանողականաց իշխանութենէ անկումն, մինչեւ այնքան լաւ բան է իշխանութեան վրայ մնալ։ Բայց անհամաձայնութիւնն Ազատականաց համար ևս վնասաբեր կրնայ լլինել, տնուազի Պահպանողականք կրնան մղուիլ մի քանի շաբաթէն լուծելու երեսփոխանութիւնն, Ընտրողական նոր Օրէնքին հրամայած կարգադրութեանց լրանալէն յառաջ, առժամանակեայ նոր երեսփոխանութիւն մը կազմելով ըստ ընտրական հին դրութեան հ'ըսուի թէ պատահականութիւն մ'է այս, արդարեւ անօրինակ և անհաճոյ, բայց ճշդիւ օրինական, զոր Պահպանողականք իրենց ձեռաց մէջ զէնք մ'ըրած են։ Ազատականաց շահը կը պահանջէ բացարձակապէս որ նոր ընտրութիւնք կատարուին ըստ Ընտրական նոր Օրէնքին, որուն նոր շրջանակաց կազմութեան համար որոշած կարգադրութիւնք լրացած չեն դեռ։ Ազատականք շատ յոյսեր ունին թէ նոր ընտրոյդ փայլուն յաղթանակ մը պիտի տան Ազատական դատին, ուր կը պարտին իրենց քաղաքական իրաւունքներ։ Բայց օրինական արդեւք մը չկայ Պահպանողականաց դէմ՝ պարագայից բացառիկ հանգամանքին վրայ յենլով ըստ նախկին դրութեան ընտրութիւններ կատարել տալու մի քանի շաբթուան մէջ, եռաբի թողլով Խորհրդարանի նորոգ կազմութիւնն ըստ նոր Օրինաց։ Այս Պահպանողական ըսպառնալիքն կրնայ քիչ մը կշիռ ունենալ յայս Ազատականաց, և զանոնք արամադիր ընել մեղմելու իրենց կուսակցական խստութիւն։ Ամեն պարագայի մէջ, ո'և է եղանակաւ առժամանակեայ համաձայնութիւն մը պիտի գոյանայ, մինչեւ որ առաջիկայ աշնան վերջերն Ազգն իսկ իւր վճռական վճռով լուծէ քաղաքական տագնապը։ Բայց մինչեւ այն ատեն, Մեծն Բրիտանիա կարող չպիտի լլինի շատ որոշ և կտրուկ ընթացք մը բռնել արտաքին քաղաքական խնդրոյ մէջ, և փոքր անպատեհութիւն մը չէ այս։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻԱ. Հռոմ, 18 յունիս. Երեսփոխանաց ժողովը վիճաբանեցաւ Արտաքին գործոց Նախարարութեան Ելմտացոյցին վրայ։ Նախարար Գ. Մանչինի յայտարարեց թէ իրաց վիճակը չէ փոխուած մայիս 8ի քուէարկութենէն ի վեր, յորժամ ժողովը կարեւոր մեծամասնութեամբ մը վստահութիւն յայտնեց Նախարարութեան վրայ, և թէ իրողութիւնք լիովին իրաւունք տուած են Կառավարութեան գործերուն և գուշակութիւններուն։ Իտալական կառավարութիւնը նոր արշաւանք մը չպիտի ընէ Կարմիր ծովուն մէջ առանց Խորհրդարանին կամքն առնելու, բայց չուզեր ետ կանչել այն զորքեր զոր արդէն զրկած էր այդ կողմ. որովհետեւ կառավարութիւնը կը կարծէ թէ լաւ գործ մ'ըրած էր զրկելով զանոնք։ Ընդդիմադիր կուսակցութեան պնդերը ծանուցին թէ Արտաքին գործոց Նախարարին հետեւած քաղաքականութեան հակառակ քուէ պիտի տան։ Նախարարապետ Գ. Տէրբէդիս յայտարարեց յոյնժամ թէ Նախարարութիւնը բացարձակապէս համերաշխ է, այսինքն Գ. Մանչինիի դէմ ուղղեալ ամեն քուէ ամբողջ Նախարարութեան դէմ ուղղեալ պիտի նկատուի։ Այսպէս ժողովն 126ի դէմ 146 քուէով ընդունեց Օրակարգ մը, որ առանց պարունակելու «վստահութիւն» բառը, կը յայտարարէ թէ ժողովն ի նկատ կ'առնու և կ'արձանագրէ Նախարարութեան յայտարարութիւններն ի մասին իւր ապագայ աշխարհավարութեան։—Այս քուէարկութենէ քիչ ետքը տեղի ունեցաւ Ելմտացոյցին քուէարկութիւնն, յորում Նախարարութիւնն ստացաւ միայն 4 քուէի մեծամասնութիւն, և, ինչպէս արդէն գիտենք, հրաժարական տուաւ։)

— Հռոմ, 18 յունիս. Բաբելոն Ռոմանօ կ'ըսէ թէ Արտաքին գործոց Պաշտօնատան Ելմտացոյցին միայն 4 քուէի մեծամասնութեամբ ընդունելութիւնն հարուած մ'է Գ. Մանչինիի դէմ անձնապէս, և ո'չ թէ Նախարարութեան դէմ հաւաքապէս։ Այս կարեւոր լրագիր կը պահանջէ ուրեմն որ Նախարարութիւնը վերակազմուի ընդ Նախագահութեամբ Գ. Տէրբէդիսի։—Ռիֆորմա ևս կը յայտնէ նոյն կարծիք։

— Հռոմ, 19 յունիս. Նախարարական տագնապը կը շարունակէ։ Ումբերտօ թագաւորը կանչեց Ընդդիմադիր կուսակցութեան պարագլուխներն, զՊ. Քայրոլի, Պ. Մինղեդի, և պիտի կանչէ ուրիշ քաղաքական անձնաւորութիւններ ալ, նոցա կարծիքն ստանալու քաղաքական կացութեան վրայ։ Կը կարծուի ընդհանրապէս թէ Գ. Տէրբէդիս պաշտօն պիտի ստանձնէ կազմելու նոր Նախարարութիւն մը, յորմէ դուրս պիտի մնայ Գ. Մանչինի։

ԹՈՒՐՔԻԱ, ԵՒ ՀՆՏԱՆՏ. Կ. Պոլիս, 17 յունիս. Բ. Դուռը չուզեր հաւանիլ Մաքրանոցի տեւողութեան զեղչման, զոր Հռոմի Առողջապահական Դեսպանախորհուրդն որոշած էր, և իւր մերժման ոյժ տալու համար, Տէրութեանց ուղղելի շրջաբերական մը կը պատրաստէ։

ԱՒՍՏՐԻԱ. Պրիւն, 17 յունիս. Երէկ, գործատեարց և գործաւորաց միջեւ վէճ ծագեցաւ աշխատութեան տեւողութեան վրայ, և այս վէճ ծանր կռուոյ մը կերպարանն ստացաւ։ Գործաւորք խմբովին յարձակեցան քանի մը գործարաններու վրայ, և դուռներն ու պատուհանները կոտրեցին քարի հարուածովք։ Ջօրքերը պարտաւորեցան միջամտել և զէնք գործածել ամբոխին դէմ։ Քանի մը զինուորք և գործաւորք վիրաւորեցան։ Խաղաղութիւն հաստատեցաւ դեպ ի կէս գիշեր։

—Պրիւն, 18 յունիս. Գործադուլը կ'ընդարձակի, զի գործաւորք թոշակի յաւելումի կը պահանջեն։

—Պրիւն, 19 յունիս. Մորաւիոյ կառավարիչը գործադուլ ընողներուն կոչեմ պատուիրակութիւն մ'ընդունելով, յանձնարարեց բարեկամօրէն կարգադրութիւն մ'ընել գործատեարց հետ։

ԱՓՐԻԿԷ. Մատրիտ, 17 յունիս. Էքուա և Իմբարդել լրագիրը նորէն Կառավարութեան ուշադրութիւնը կը հրաւիրեն Ֆրանսական Կառավարութեան Մարոքի նկատմամբ խորհրդոց վրայ, և կը պահանջեն որ Սպանիա, հետեւելով Արմիյօ տէ Վէկա Մարքիզին 1882 ին բացատրած աշխարհավարութեան, գրաւէ Մարոքի եղերաց վրայ քանի մը դիրքեր և ռազմական կէտեր բռնէ։

—Ատէն, 16 յունիս. Զանզիպարէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գերմանիա Վիդուի երկրին բնիկ ցեղապետներուն հետ կարգադրութիւն մը կնքած է, որուն համեմատ այդ երկիր կ'ենթարկի հովանաւորութեան Գերմանիոյ։ Վիդու Զանզիպարի Սուլթանին իշխանութեան հպատակող երկրին անմիջապէս անդին կը գտնուի։

ԶԱՆԶԱՆ ԴԷՊԵՐ. Ֆրանսական Իդեամարտանաւն, որ «Ազատութեան Արձանը» կը տանէր յԱմերիկա, յունիս 17 ին հասաւ Նիւ Եորքի Նաւահանգիստն, ուր մնաւ առաջնորդութեամբ ամերիկեան մարտանաւուց և բազմաթիւ շրջենաւուց, որք եկած էին՝ Ամերիկացւոց երախտագիտութիւնն արտայայտելու համար Ֆրանսական ազգին մեծարժէք նուէրին համար։

— Պոմպէյէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ֆրանսական Իդեամարտանաւն ընկղմեցաւ Ատլանտի ծովախորշին մէջ, վերջերս տիրող սաստիկ փոթորկոյ միջոցին, և բոլոր Ֆրանսացի սպայք, զինուորք և նաւաստիք զորս կը պարունակէր՝ ճարակ եղան ալեաց կատաղութեան։

ԱՆԳԼԻԱ. Լորտ Սալիսպըրի Հնդկաստանի Նախարար անուանեց զԼորտ Ռանտոլֆ Չըրչիլ, որ թէև երիտասարդ, (դի կը կարծուի թէ 30 տարեկան չկայ դեռ.) քիչ ժամանակի մէջ այնքան մեծ ազդեցութիւն ստացած էր, որ աւելի փոքր պաշտօնի չէր կրնար կոչուիլ, և միայն զայս պաշտօն ընդունել կը յօժարէր։ Բայց որովհետեւ Լորտ Չըրչիլ սաստիկ հակառուս զգացումներ կը սնուցանէ, զորս վերջերս իսկ յայտարարեց թէ՝ Խորհրդարանին մէջ և թէ՝ Խորհրդարանէն դուրս, այս անուանումէ շատ կը քննդատուի, որովհետեւ Հնդկաստանի և Կեդր. Ասիոյ մասին Ռուսերոյ հետ ծագած խնդիրներն ևս առաւել դառնացնելու բնութիւն ունի։

— Սպանդարդ պահպանողական գլխաւոր լրագիրը կը ծանուցանէ յունիս 20 թուով թէ Պահպանողականաց և Ազատականաց միջեւ բանակցութիւնք կը շարունակին Վեհ. Թագուհւոյն միջնորդութեամբ. բայց հաւանական է որ Պահպանողականք չպիտի յաջողին իշխանութեան վրայ մնալ, և յայնժամ Գ. Կլատստոն կը վերադառնայ իշխանութիւն՝ հանդերձ փոփոխեալ Նախարարութեամբ մը։

ԻՏԱԼԻԱ, ԵՒ ԱՒՍՏՐԻԱ. Կը կարծուի թէ Իտալիոյ Արտաքին գործոց հրաժարեալ Նախարար Գ. Մանչինիի պիտի յաջողէ կա՛մ Կոմս Քորդի, դեսպան ի Կ. Պոլիս, և կա՛մ Ռոպիլանդ կոմսը, դեսպան ի Վիէննա։ Գ. Մանչինի Անգլիոյ հետ դաշնակցութեան կուսակից էր, և իւր անկումն Գ. Կլատստոնի անկման ուղղակի հետեւանքն է, մինչ իւր երկու հաւանական յաջորդք Աւստրօ-Գերմանական դաշնակցութեան կուսակից կը համարուին, և հետեւապէս՝ անգլիական աշխարհավարութեան անընդունելի։

ԱՖՂԱՆՍՏԱՆ. Քեաբուլէ կը գրուի Հնդկաստանի անգլիերէն լրագրաց։

Էմիր Ապտուր-Ռահման Խան Հնդկաստանի Փոխարքայ Լորտ Տըֆրէնի հետ ի Ռաուալ-Բինտի տեսակցութենէն վերադառնալուն պէս, ուշնկդրութեան սրահը կանչեց իւր 68 կիներ, անոնց տալու գոհարեղէններ, արդուզարդու նիւթեր և յիշատակներ, զորս իրեն հետ կը բերէր ուղեւորութենէն։ Տիկնայք կարգաւ շարուեցան Եօթն-Մոլորակաց սրահին մէջ, ուստից դնացին ունկնդրութեանց դահլիճը։ Տիկնայց առջեւէն կը քալէին Ներքինապետն և իւր տեղակալ, առաջինը կարմիր համազգեստով, երկրորդը՝ կանաչ, և երկուքն ալ կը կրէին իրենց բարձր պաշտօնից նշանները։ Նոցա կը հետեւէին տասն երկու Ներքինիք սպիտակազգեստ, որոց ետ կը յաջորդէին նմանապէս սպիտակ հագած տասն երկու գերիներ։ Ապա, ամպհովանւոյ մը ներքեւ զոր Ներքինիք կը կրէին, կը յառաջանային Էմիրն չորս օրիորդաց ուսերունք, իւրաքանչիւրն իւր գլխոյ վրայ կրելով ոսկի թագ մը։ Միւս կանայք կը հետեւէին անոնց։

—= 77 =—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒ ՎԷՐՆ

ԿՐԱՆԹ ՆԱԻԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՒՔՆ

ԳԼՈՒԽ Է.

ԷՅՐԹԸՆ

—Բայց ի՞նչ գիտէք դուք հապա, հարցուց Կլէնարվան։

—Զայս միայն։ Եթէ Կրանթ նաւապետն ողջ է, Աւստրալիոյ մէջ է։

—Ո՛չ եղաւ նաւաբեկութիւնն, հարցուց յայնժամ Մաք Նապս հաղարապետը։

Ընելիք առաջին հարցումն այս էր, բայց այս անակնկալ դէպքէն պատճառեալ շփոթութեան մէջ՝ Կլէնարվան, ամեն բանէ առաջ Կրանթ նաւապետին ուր դտնուիլն իմանալու ամապարանք՝ չէր հարցուցած Պէլֆրէնդի ընկած տեղն։ Այս վայրկենէն սկսեալ, խօսակցութիւնն, որ ցայնժամ տարտամ, տնտրամաբան, նիւթէ ի նիւթ ցատկելով, առանց անոնց խորը քննելու, իրողութիւններն իրարու հետ խառնելով, թուականները վեր ի վայր չբնելով կը կատարուէր, աւելի բանաւոր ընթացք մ'առաւ, և չատ չանցած՝ այս մեալ պատմութեան մանրամասնութիւններն յստակ և ճիշդ կերպիւ երեւնալ սկսան ունկնդրաց մտքին։

Մաք Նապսի ըրած հարցման հետեւեալ կերպիւ պատասխանեց Էյրթըն։

—Երբոր նաւուն յառաջակոման բարձրաւանդակէն յափշտակուեցայ, փոքրիկ առագաստը վար կը քաշէի, Պէլֆրէնդ դէպ յԱւստրալիոյ ծովեզրը կը դիմէր, ուստից հաղիւ երկու հարիւր գրկաչափ հեռի էր։ Ուստի նաւաբեկութիւնն այն տեղն եղած է։

—Լայնութեան երրորդ-եօթն աստիճանին տակ, հարցուց Ճոն Մանկլը։

—Երրորդ-եօթն աստիճանին տակ, պատասխանեց Էյրթըն։

—Արեւմտեա՞ն ծովեզրին վրայ։

—Ո՛չ, արեւելեան ծովեզրին վրայ, պատասխանեց նաւաստեաց տասնապետը։

—Ո՞ր թուականին։

—1862 յունիս 27 ին գիշերը։

—Ձիշդ է, ճիշդ է, գոչեց Կլէնարվան։

—Կը տեսնէք ահա, Միլրոս, աւելացուց Էյրթըն, թէ իրաւամբ կրցի ըսել. «Եթէ Կրանթի նաւապետ դեռ ողջ է, Աւստրալիոյ երկրին մէջ պէտք է որոնել զայն եւ ոչ այլուր»։

—Եւ պիտի որոնենք, պիտի գտնենք, պիտի ազատենք զայն, բարե՛կամ, գոչեց Բիանէլ։ Ա՜հ, անգին գրութիւն, աւելացուց կատարեալ միամտութեամբ մը, պարտինք խոստանիլ թէ յոյժ կորովամիտ մարդոց ձեռք անցած ես։

Անշուշտ ոչ ոք լսեց Բիանէլի այս շողջորթ խօսքեր։ Կլէնարվան և ամիկն Էլենա, Մարի և Ռոպէրթ փութացեր Էյրթընի շուրջը պատեր էին, և ձեռները կը սեղմէին։ Կը թուէր թէ այդ մարդոյ ներկայութիւնն ապահով դրաւական մ'էր Հարրի Կրանթի փրկութեան։ Որովհետեւ նաւաստին պրծած էր նաւաբեկութեան վտանգներէն, ինչո՞ւ համար նաւապետն ալ ողջ առողջ ազատած չլինէր այդ ապետոյն արկածէն։ Էյրթընն յօժարակամ կը յեղյեղէր թէ Կրանթ նաւապետն ալ ողջ պարտ էր լինել իրեն պէս։ Ո՞ւր էր. դայս չէր կրնար ըսել. բայց անշուշտ Աւստրալիոյ ցամաք երկրին մէջ էր։ Իրեն ուղղուած բազում հարցմանց՝ խելքով և նշանաւոր ճշդութեամբ կը պատասխանէր։ Օրիորդ Մարի, անոր խօսած միջոցին, ձեռներէն մին իւր ձեռաց մէջ բռնած էր։ Որովհետեւ այդ նաւաստի. իւր հօր ընկերներէն մին էր, Պէլֆրէնդի նաւաստիներէն մին էր, Հարրի Կրանթի քով ապրած էր, ծովերը պտըտած էր անոր հետ, մի և նոյն վտանգաց դիմադրաւած էր, Մարի չէր կրնար աչերը գոնել այդ բրացեալ դէմքէն, և դուլար ուրախութենէն։

Մինչեւ ցարդ ոչ ոք մտքէն անցուցած էր կապիտէն նաւաստեաց տասնապետին խօսութենէն ու ճշմարտախօսութենէն։ Միայն հաղարապետն և Թերեւս Ճոն Մանկլը, նուազ դիւրահաւան, կը հարցնէին մտովի թէ Էյրթընի խօսքերը կատարեալ վստահութեան արժանի՞ էին։ Իւր անակնկալ հանդիպումը կրնար կասկած զրգռել։ Արդարեւ Էյրթընն զուգադարմար իրողութիւններ, թուականներ և մանրամասնութիւններ յիշած էր։ Բայց այդ մանրամասնութիւնք, որչափ և ճիշդ լինէին, ստուգութիւն չեն կազմեր, և նշմարուած է ընդհանրապէս թէ սուտ մանրամասնութեանց ճշդութեամբ կը հաստատուի միշտ։ Մաք-Նապս վերապահեց իւր կարծիքն եւ զգուշացաւ յայտնելէ։

Դալով Ճոն Մանկլը, իւր կասկածները չկրցին երկար դիմանալ։ Նաւաստին խօսքերուն, և իրրեւ ճշմարիտ ընկեր Կրանթ նաւապետին ընդունեց զայն՝ երբոր ըսեց թէ հօրը վրայ կը խօսէր մանկամարդուհւոյն հետ։ Էյրթընն կատարեալապէս կը ճանչէր զՄարի և Ռոպէրթ։ Տեսած էր զանոնք ի Կասկոյ՝ Պէլֆրէնդի ճանրայ ելած ժամանակ։ Ցիշեց նոցա ներկայութիւնն այն հըրաժեշտի նախաճաշին՝ զոր նաւապետը տրուած էր իւր բարեկամաց։ Մաք Ինթայր ատենապետն ալ ներկայ էր։ Ռոպէրթ, որ հաղիւ տասն տարու կար և Տիք Թրրնըր նաւաղապետին յանձնուած էր, ձեռքէն փախչելով կայմերն ի վեր մագլեր էր։

—Ճշմարիտ է, ճշմարիտ է, կ'ըսէր Ռոպէրթ Կրանթ։

Եւ Էյրթընն այսպէս հաղարաւոր մանր իրողութիւններ կը յիշէր՝ առանց ընծայել թուելու զայն կարեւորութիւն՝ զոր կուտար անոնց Ճոն Մանկլը։ Եւ երբ կանգ առնուր, Մարի կ'ըսէր նմա իւր քաղցր ձայնիւ.

—Տակաւին, պարո՛ն Էյրթըն, խօսեցէք տակաւին մեր հօր վրայ։

Նաւաստեաց տասնապետը կրցածին չափ գոհացուց աղջկան փափաքը։ Կլէնարվան չէր ուզեր ընդմիջել զայն, և սակայն քանէն աւելի օգտակար խնդիրք կը խըռնէին իւր մտաց մէջ. բայց տիկին Էլէնա, Մարիի ուրախալից սիրայուրութիւնը ցուցնելով, թող չէր տար որ խօսէր։

Այս խօսակցութեան մէջ էր որ Էյրթընն պատմեց Պէլֆրէնդի պատմութիւնն և Խաղաղական ծովերուն մէջ ըրած ուղեւորութիւնը։ Մարի Կրանթ ծանօթ էր այն ուղեւորութեան մեծ մասին, որովհետեւ Պէլֆրէնդի լուրերը մինչեւ 1862 տարւոյն մայիս ամիսը կը հասնէին։ Այս միաձայն ժամանակի մէջ Հարրի Կրանթ Ովկիանիոյ գլխաւոր երկիրները պտըտեցաւ. Էէսպրիտեան կղզիները, Նորկինէա, Նոր Զէլանտա, Նոր Կալեդոնիա, շատ անգամ լաւ շարադրացող երկրակալութեանց հանդիպելով, անգլիական իշխանութեանց կողմէ չարակամութիւն կրելով, վասն զի իւր նաւն իրրեւ կասկածելի նշանակուած էր բրիտանական գաղթականութեանց մէջ։ Սակայն կարեւոր դէպ մը դատած էր բարուավիոյ արեւմտեան ծովեզրին վրայ։ Անդ սկսմական գաղթականութեան մը հաստատումը դիւրին և ապահովապէս բարգաւաճելի երեւցաւ։ Արդարեւ Մոլուքքան և Փիլիպպեան կղզեաց ճանրուն վրայ դաղարի լաւ նաւահանգիստ մը նաւեր կը հրաւիրէր հոն, մանաւանդ երբոր Սուէզի պարանոցը բացուելով՝ բարեշրջուսոյ ճանրան ջնջուէր։ Հարրի Կրանթ այն մարդոցմէն էր, որք Պ. Տը Լէսէբսի գործը կը կատարէին Անգլիոյ մէջ, և աշխարհավարական նախանձընդդիմութիւնն արդելք չէին նետեր միջազգային մեծ շահու մ'առջեւ։

—Բարուավիան այցելէ յետոյ, շարունակեց Էյրթընն, Պէլֆրէնդ Թալլավոյ գնաց պատրաստելու, և 1862 մայիս 30ին մեկնեցաւ այդ նաւահանգստէն Եւրոպա վերադառնալու համար Հնդկական Ովկիանէն, Բարեյուսոյ ճանրով։ Զուեցէն երեք շաբաթ յետոյ, զարհուրելի փոթորիկ մը նաւուն կաղմածները խորտակեց։ Խրուտի հանդիպեցաւ, հարկ եղաւ կայմերը կտրել։ Ջուր առնուլ սկսաւ յատակէն, և անհնար եղաւ խրամատը խնայել։ Շատ չանցաւ, նաւաստիք պարտասեցան ուժասպառ։ Կարելի չեղաւ ջրհանները դադրեցնել։ Ութ օր Պէլֆրէնդ խաղալիկ եղաւ հովերուն։ Վեց ոտք ջուր կար իւր տակի շտեմարանին մէջ. քիչ քիչ կը սուզէր։ Մակոյկներն ալիքներէն յարձակուած էին փոթորկին ժամանակ։ Հարկ եղաւ նաւուն մէջ մնալիլ։

Յունիս 22ին դիշերը տեսան որ Աւստրալիոյ արեւելեան ծովեզրին առջեւ էին, ինչպէս որ լաւ հակցեր էր Բիանէլ։ Շատ չանցաւ, նաւը ցամաքն ընկաւ բուռն բախմամբ։ Նոյն վայրկենին Էյրթընն, կոհակէ մը յարձակուելով՝ ծովեզրեայ խարակներուն վրայ նետուեցաւ և զգայութիւնը կորսնցուց։ Երբոր ինքն իրեն եկաւ, տեսաւ որ բնիկներուն ձեռքն էր, որք երկրին ներսերը քաշեցին տարին զայն։ Այն օրէն ի վեր չլսեց բնաւ Պէլֆրէնդէն խօսքն և ենթադրեց, ոչ առանց պատճառի, թէ Թուոֆոլ-Պէյի վտանգաւոր ժայռերուն վրայ բնաջինջ եղած էր։

(Շարունակելի)

Դահլիճը մոնելով, բոլոր խումբը միահաղոյն, կանաչ և ներքինիք, անկան յոտս Իմիրին, որ անմիջապէս սկսաւ բաժնել իւր իսկ ձեռաք մէն մի կնոջ յատկացեալ ընծայն։ Ամեն ընծայի կցուած էր ձօնման տոմակ մը պարկերէն գրուած։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ։ Թէհրանէ կը ծանուցուի թէ Շահին որդւոյ մին, իշան Նայիպ-իւա-Սալթանա, գինուորական վարժարան մը բացաւ պարսիկ բանակին սպայից համար, յորում դաս պիտի տան և վարժութեանց պիտի հսկեն 2 անգլիացի, 3 Ֆրանսացի, 7 գերմանացի և 1 իտալացի սպայք։—Աբ-Յուսֆաթ Պարսկաստանի անուամբ Ֆրանսերէն թերթ մը սկսաւ հրատարակել ի Թէհրան ընդ հովանաւորութեամբ Շահին։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքիս բումանական դեսպան Պ. Կիքա երէկ Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելութեան գալով ի Պատրիարքարան, կէս ժամէ աւելի տեսակցեցաւ Ն. Սրբազնութեան հետ։

Ազգ. Վարչութեան Կրօնական ժողովը գումարուելով երէկ ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ատենապետութեամբ Դեր. Խորէն Նար-Պէյ Սրբազանի, հետեւեալ տնօրինութիւններն ըրաւ։

1. Ըստ խնդրանաց Տիգրանակերտի ազգային ժողովոյ, որոշուեցաւ Դերճկեան Դեր. Արիստակէս եպիսկոպոսը Տիգրանակերտ զրկել, տեղւոյն ժողովրդեան կրօնախոստեան դիւմուներն արդիւնելու և ազգային գործերը վարելու համար, մինչեւ ցընտրութիւն Առաջնորդի։

2. Ժողովն իւր միաձայն համարատուութեան տեղեկագրոյն առաջին ընթերցումն ըրաւ։ Երկրորդ ընթերցումն ալ վաղը տեղի պիտի ունենայ նախ քան զգումարում Խառն ժողովոյ։

3. Ժողովը Բումանիոյ և Պուլղարիոյ ազգայնոց անհոլիւ վիճակը նկատողութեան առնելով, ուզեց այս մասին տնօրէնութիւն մ'ընել։ սակայն հարկ դատեց նախ յիշեալ երկիրներու ժողովրդական վիճակին վրայ ստոյգ տեղեկութիւններ քաղել։ Եւ որովհետեւ վերջին անգամ Դեր. Խորէն Նար-Պէյ Սրբազան իւր այցելու հովիւ գնացած էր ի Բումանիա և ի Պուլղարիա, ժողովն յանձնարարեց Ն. Սրբազնութեան որ այս մասին տեղեկագիր մը պատրաստելով ներկայէ ժողովին, ըստ այնմ ո'ր և է տնօրինութիւն մ'ընելու համար։

4. Ժողովը նկատողութեան առնելով Տ. Սուքիաս քահանայի մէկ բողոքագիրն ընդդէմ Ճէրէոէն Շարէնի լրագրոյ յորում Տ. Սուքիաս հայրն իւր խարդախութեան հետեւանակ հրատարակուած էր Ազգային ժողովոյ վերջին նստի նկարագրութեան մէջ, վերջապէս բաղդատեց եկեղեցական երեսփոխանաց ընտրութեան քուէհամարը, որով Տ. Վահան վարդապետի յանցաւորութիւնն վերահաստատեցաւ։ Ժողովն որոշեց միանգամայն իւր յաւաջիկայ նստին հրաւիրել զՏ. Վահան վարդ., Տ. Կարապետ քահանայ Սեթեան եւ ուրիշներ, այս մասին ինչ ինչ բացատրութիւններ առնելու համար։

5. Հրէութենէ ի Հայաստանեայց Եկեղեցի դարձող Զիւսիվլիլ անուն օրիորդին Մկրտութեան հրման տրուեցաւ, եւ զոհ-ծագրութիւնն յանձնուեցաւ Պատրիարքական Դեր. փոխանորդ Հօր։

6. Պալատու մէջ հայ ննջեցելոյ մը յուղարկաւորութեան պահուն տեղւոյն Էրէկական վարժարանի աշակերտաց մին դագաղին վրայ թաքած լինելով անցեալ շաբթու, Տ. Տաճատ վարդապետի յանձնուեցաւ այս մասին հարկ եղած քննութիւնը կատարելով տեղեկագրել ժողովին։

Բաց յայտնէ, կրօն. ժողովն ուրիշ տասնի չափ անհատական խնդիրներով զբաղեցաւ, յորս կը դասնուի Պուրճէի Տ. Միքայէլ քահանայն ի Քէօսթէնճէ զրկելու որոշումը։

Վանէն տրուած մասնաւոր լրոց նայելով, Վանայ շրջակայ գիւղերն ալ սկսած են հետեւիլ քաղաքին տուած օրինակին, և փոխանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, Աղթամարի Կաթողիկոսութիւնը կը յիշատակեն իրենց եկեղեցեաց մէջ։ Վանեցիք լոկ յիշատակութեամբ չեն շատանար, այլ կը յայտարարեն թէ կը դադրին Էջմիածնի թեմ լինելէ և Աղթամարի թեմ պիտի լինին այսուհետեւ, ինչպէս Վասպուրականի նահանգին քանի մը գաւառակներ Աղթամարի Կաթողիկոսութեան թեմ են արդէն։—Իբր 15 տարի առաջ Վանեցիք կը պահանջէին Աղթամարայ Կաթողիկոսութեան ջնջումն, և անկէ ի վեր ալ չէին դադրած դանդատելէ այժմեան Խաչատուր Կաթողիկոսին ընթացից դէմ, ազգավնաս, բռնապետական և հարստահարիչ հռչակելով զայն։ Բայց Կաթողիկոսական վերջին ընտրութեան մէջ իրենց ակնկալութեանց ի դերեւ ելնելը վեր ի վայր շրջած է Վանեցւոց բոլոր համոզումներն ու դգացումներն։ Այժմ ինքնաբերաբար կը մնեն Աղթամարայ Կաթողիկոսութեան ներքև, և եթէ Խրիմեան Հայրիկ Կաթողիկոս չեղաւ՝ կը յօժարին շատանալ Խաչատուր Կաթողիկոսով։

Պանորմայի ժողովգեան կողմէ հեռագրեր սկսած են հասնիլ ի Պատրիարքարան, որով կը բողոքեն Խառն ժողովոյ վերջին որոշման՝ այն է նոր եկեղեցական մը զրկելու որոշման դէմ։ և կը յայտարարեն թէ Պանորմայի ժողովուրդը կէօսթիւքէան Տ. Մովսէս Ծ. Վարդապետէն զատ ոչ ոք կ'ընդունի։

Սոյն հեռագրերը Կրօն. ժողովոյ երկի նստին ներկայացուցեր են, և հաւանականաբար վաղուան գումարելի խառն ժողովոյ ալ պիտի ներկայացուին։

Վանէն տրուած վերջին լուրերէ կ'իմանանք թէ նոր և յանկարծական ձերբակալութիւն մը եղած է քաղաքին մէջ։

Ցաւօք կիմանանք թէ Մինաս Զերբաղ էֆէնտի երկու չաբաթէ ի վեր հիւանդացած լինելով, Բերայի Ֆրանսական հիւանդանոցը փոխադրուած է ճարաար բժշկաց ձեռամբ աւելի կանոնաւորապէս դարմանուելու համար։ Բժիշկներն արգիլած են նմա ոեւէ այցելութիւն ընդունիլ։

Ինչպէս արդէն ծանուցած էինք, մեր մասնաւոր թղթակից եւս կը հաստատէ մեզ թէ մայիսի 13ին Գարա-Բիլիսէի մէջ բացուեր է, ձեռամբ Մ. Սարքեան էֆէնտիի, բարձրագոյն նախակրթարան մը Միացեալ ընկ. վարչութեան ներքեւ։ Ցեղացիք 35 օսմ. ոսկի կը վճարեն վարժարանին ծախուց համար։

Նմանապէս, մայիս 22ին ի գիմաց Միացեալ ընկերութեանց Մ. Սարքեան էֆէնտի բարձրագոյն նախակրթարան մը բացեր է Պայազիտի մէջ։ Ցեղացիք կը վճարեն տարեկան 30 օսմ. ոսկի։ Վարժարանի համար եւս սկսած են գեղեցիկ շէնք մը կառուցանել։

Բասենի ազգայինք եւս կ'սպասեն Սարքեան էֆէնտիի, որպէս զի բանակցութեան մտնեն իրենց քաղաքի մէջ եւս վարժարան մը բանալու համար։

Գոհացուցիչ է տեսնել որ մեր գաւառացի ազգայինք սկսած են ինքնօգնութեամբ աշխատիլ իրենց զաւակաց կրթութեան համար։

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Սամսթիոյ եկեղեցւոյն շինութիւնը փութով առաջ կը տարուի։

Կը լսենք թէ Յակոբեան Միքայէլ էֆէնտի՝ ըստ որոշման Բաղ. ժողովոյ՝ նամակ մ'ուղղելով առ Ս. Պատրիարք Հայրն, շինութեան հսկոյ Մասնաժողովոյ անդամից անունները նշանակեր և խնդրեր է որ սոյն Մասնաժողովը իւր առաջին նստաբ Ն. Սրբազնութեան Նախագահութեամբ ընէ։

Տիգրանակերտցի, Զնբուշցի և Ա. կընցի երեք ազգայինք որք իսլամական կրօնին ընդունելու փափագ յայտնած էին առ Բ. Դուռն, Աբժ. Տ. Խորէն քահանայի ջանիւք իրենց համոզումէն եւս կեցեր և Հայաստանեայց եկեղեցւոյ գիրկը դարձեր են։

Սարբ-Եարէն ուրիշ ազգային մ'ալ իսլամական կրօնն ընդունելու փափագ յայտներ է։

Մեր վաղուան թուով պիտի հրատարակենք «Մեկիթիսեդեկ Բ. Կաթողիկոս և ռուս կառավարութիւնը» խորագրով կարեւոր յօդուած մը, հետաքրքրաշարժ ծանօթութեամբք լի, որ մեզ զրկուած է Տփղիսէն ձեռնհաս և իրազեկ ազգայնոյ մը կողմէ։

ԱԶԳ

Մկրտիչ էֆէնտի Փորթուգալեան կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ 1885 օգոստ. 4ին (20 յուլիս) շաբաթ օրէն պիտի հրատարակէ ՄԱՐՄԷՑԻ մէջ մի

ՀԱՅՏԵՐԻՆ ԼՐԱԳԻՐ

Ազգային, Քաղաքական, Գրական, Դիտական, եւայլն

Շաբաթն երկու անգամ

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ եւ ՇՈՒԲԱԹ օրեր

Տարեկան բաժանորդագինն է 20 Ֆրանգ Եւրոպայի համար, 1 օսմ. ոսկի՝ Թիւրքիայի համար և 10 ռուբ. թղթադրամ՝ Ռուսիայի համար։ Խմագրութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը ամեն տեղի համար։ Վճարումները ԿԱՆԽԻԿ կը լինին։ Տարեկանը միանուագ վճարելու տնկարդներէն դիւրութեան համար կ'ընդունինք նաև մաս առ մաս (վեցամսեայ կամ եռամսեայ) կանխիկ վճարումներ, առանց ոեւէ յաւելուած անելու տարեկան բաժնորդագինին վրայ։

Այս ժողովրդական լրագիր որ ազատական ուղղութիւն պիտի ունենայ, պիտի ծառայէ եւրոպական լուսաւորութեան գաղափարները Հայերին մէջ տարածելու։ Այդ լրագիր խմագրութիւնը ծանօթ լինելով Թիւրքիայի, Ռուսիայի և Պարսկաստանի հայերի գրութեան, նկատի կ'առնէ նաեւ նոցա տարբեր պետութիւնների հատատած օրէնքները և ըստ այնմ կ'աշխատի հայ ազգի մեծամասնութեան օգտակար մի թերթ լինել։

Թերթն անպատճառ պիտի հրատարակուի որոշուած ժամանակը (Օգոստոս 1/20 Յուլիս)։ ուստի հրաւէր կը կարդանք ամեն ընթերցողէր Հայերին որ եթէ իրենց բաժնորդագրութեամբ մեր թերթի քաջալերել կը ցանկան, փութան իրենց հասցէն որոշակի գրել մեզ այժմէն որպէս զի Ա. թիւը հրատարակած ժամանակ, խմացած լինինք արդէն թէ քանի՞ բաժնորդ պիտի կրնանք ունենալ և ըստ այնմ անենք մեր նախապատրաստութիւններ։ Թերթին վերաբերեալ նամակ կամ ծրար կարելի է փոստով ուղղակի զրկել խմագրին, Մ. Բարթուղալեան, Արմէնի փողոց, թիւ 2 (Օթէլ Ֆոռէ), ՄԱՐՍԻԼԻԱ (Ֆրանսա)։

Հանրապետ— Խմբագիր–Տնօրէն

ՖԷԼԻԲԻՍ ԱՆՖԱՆԴԻՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական գիւանի Պէյլիք-ճի Նիազի էֆէնտի Նախընթաց գիշեր յանկարծամահ եղաւ։

Առեւտրական Սենեկի պաշտօնական թերթը գոհութեամբ կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանն ուզելով նոր զարկ մը տալ երկրին տնտեսական վիճակի բարձրացման, մտադիր է Օսմ. Կայս. Պանքային յանձնել Հայտարարչաչէն ի Նիկոմիդիա երկաթուղւոյ գիծն երկարելու արտօնութիւնը, վասն զի յիշեալ դրամատան պայմանք միայն ընդունելի դատուեր են։

Հայկազն էֆէնտի Պէկեան, երկրագործական Նորքնտիր քննիչ Այրզնի նահանգին, շաբաթ օր ուղեւորեցաւ յիզմիր, իւր պաշտօնի գլուխն անցնելու համար։

Առեւտրական երկրորդ Ատենի նախագահ Եանքօ էֆէնտի երկամեայ արձակուրդով Արշիպիղագոսի Կղզիները գնացած լինելով, յիշեալ տաեն անդամներէն Իսկէնտեր Մելքոն էֆէնտի պիտի նախագահէ փոխանորդաբար։

Երէկ պատմեցին թէ վերջերս վանէն եկող ուղեւորաց մէջ կը նշմարուեր Քէօսէ Մէհմէտ անուն հարիւրամեայ ծերունի մը որ քաղաքաղ վիճակ մը ունէր։ Այս ծերունին՝ որ կը պատրաստուի երթալ ի Մէքքէ, ուրբաթ օրը Սելամլըքի հանդիսին ներկայ գտնուիլ ուզելով, Վեհ. Սուլթանին ճանաչուն վրայ կեցաւ։ Ն. Վեհապատուութիւնը նշմարելով զայն, հրամայեց որ ընկերներովը Եզլոզը հրաւիրուի, դիտաստանն ու արքունի սենեակներն այցելելու համար։ Քէօսէ Մէհմէտ այս առթիւ պատիւ ունեցաւ հինգերորդ կարգի Մէճիտիէ պատուանշան ստանալու։ Վեհ. Սուլթանի հրամանաւ միանգամայն նուէրներ տրուեցան այս քաջառոյգ ծերունոյն և իւր ընկերաց։

Յունուար Ամեն. Պատրիարքն ուրբաթ օրը Ֆէնէրի Պատրիարքարանն իջնելով, Նախագահեց Խառն ժողովոյ նստին։ Այլեւայլ կրօնական և վարչական խնդիրներ նկատողութեան առնուեցան այդ նստին մէջ որ տեւեց մինչեւ իրիկուն։ Դիպուած ուշադրութեան առարկայ եղաւ թղթային մամլիարներու ընտրութեան և հաստատման խնդիրն որոյ քննութեան համար յանձնաժողով մը կազմուեցաւ, երկու եկեղեցական և երկու աշխարհական անդամներէ։

Առեւտրական և երկրագործական նախարարութիւնն հեռագրաւ հրամանագ տուաւ գաւառաց խրոր կուսակալներուն որպէս զի կարելի եղած դիւրութիւնն ընծայեն հանքային ձեռնարկութեանց և բաց ի սակեբարակէ, ուրիշ ամեն տեսակ հանքեր փնտռելու համար խնդրուած արտօնագրերը շնորհեն, օրինաց ներած սահմանին մէջ։

Մարիոս լրագիրը կ'իմանայ թէ Բ. Դուռը կը շարունակէ պնդել Արեւելեան Բումէլիի կուսակալութեան քով սպասել զի յիշեալ գաւառի և Պուլղարիոյ միջեւ կիրեալ մաքսային դաշնագիրը ընդունի։

Օսմանեան արժեթղթոց միացման գործողութիւնք աւարտած են ի Փարիզ և ի Լոնտրա մայիս ամսոյ սկիզբն և այդ թուականէն յետոյ անոնք որ հին արժեթուղթեր ունին ի ձեռին, պէտք է Կ. Պոլիս դիմեն զանոնք Միացման (ֆուզիոն) ենթարկելու համար։

Այս կերպով կայս. կառավարութեան պատուիրակք իրենց պաշտօնն աւարտած լինելով, Եղմտական նախարարութեան կողմէ հրաման տրուեցաւ անոնց որ իրենց տեղերը վերադառնան։

Արեւելեան Բումէլիի Իսլամ բնակչաց ներկայացուցիչք Փիլիպէէն շնորհաւորական հեռագիր մ'ուղղած են առ Լորտ Սալիսպըրի, Պահպանողականաց պաշտօնի գլուխ անցնելուն առթիւ։

Կայս. կառավարութիւնը բարեկամական ոճով ծանուցագիր մ'ուղղած է ֆրանսական դեսպանատան, Թունուզի մէջ ֆրանսական զօրաց կատարած ինչ ինչ շարժումներուն նկատմամբ։

Ցայսմիկ չէ թէ ֆրանսական դեսպանը պատասխանած է այս պաշտօնագրոյն թէ ոչ։

Պելճիացի հանրածանօթ հրապարակագիր Գ. Լավիլէյ նամակ մ'ուղղած է Սոֆիայի Մոնիթորէ կոչ լրագրոյն, յորում խորհուրդ կուտայ Պուլղարաց՝ յոյզերնիս չարձարձել, վասն զի այս կերպով իրենց ազգակցաց կացութիւնն առաւել ևս կը ծանրացնեն։

Մանչեսթր կ'իմանայ թէ ծանօթ իւլէմաներէն Իսաք էֆէնտի մտադիր է կայսերական կառավարութենէն արտօնութիւն խնդրել անասնոց պաշարան ընկերութիւն մը հիմնելու։ Այս ընկերութիւն պիտի հաստատուի եղեր ուրիշ քաղաքակիրթ երկիրներու մէջ գտնուած նմանօրինակ հաստատութեանց ձեւով։

Կայսերական հինգերորդ բանակի նախորդ հրամանատար Հիւսէյին Ֆէյզի փաշա երէկ մայրաքաղաքս եկաւ։

Առեւտրական Սենեկի պաշտօնական թերթի յունիսի թուոյն մէջ՝ որ հրատարակուեցաւ երէկ, հետեւեալ ուշադրութեան արժանի տեղեկութիւնները կը գտնենք Որթաճճիին (ֆիլոքսերա) նկատմամբ որոյ Քըզըլ-Թօփրաքի կողմերը ծաւալիլը ծանուցած ենք արդէն։

Որթաճճին՝ որոյ Գատը-գիւղի այգիներուն մէջ երեւիլը չորս տարի եղած է, մասնագիտաց կարծեաք, վերջերս զարմանալի կերպիւ ծաւալած է Մօտայէն ի Քըզըլ-Թօփրաք, քանի մը քիլոմէթր տեղ։ բաղում այգիներ վնասուեցան քիչ չատ, յորս են Ահմէտ Մուխթար փաշայի, Եօղուրտճի Ահմէտ էֆէնտիի, Քապա Պաշի և այլոց այգիներն ի Քըզըլ-Թօփրաք, և Պ. Լորանսօի և Ֆրէրներու այգիներն ի Մօտա։ Անցեալ տարի մէկ այգիի մը մէջ հաղիւ քան որթի բուն վարսած էին աւերիչ ճճիին, մինչ այս տարի հարիւրներով կը հաշուին անոնք։

Որթաճճին առ այժմ մի միայն Զաւալ և Եաֆոնէֆ կոչուած տեղան խաղողի որթերուն վրայ տարածուած է, մինչդեռ Պօրտօէն բերուած տունկերը տակաւին չեն վնասուած։ Որթաճճիի դադրութիւնն առաջին անգամ ծանուցուեցաւ Սպարապետ Օսման փաշայի կողմէ։

Առեւտրական նախարարութիւնն՝ յատկապէս կարդալ քննիչ Յանձնաժողովոյ տեղեկագրոյն վրայ, անցեալ շաբթու դիր մ'ուղղեց Խարթը Մեծ-Եպարքոսին, արտօնութիւն խնդրելով հարկ եղած միջոցները տնօրինել աւերիչ ճճիին ծաւալումն արգիլելու և զայն կեդրոնացնելու համար, որպէս զի կարելի լինի բնաջինջ ընել։ Յիշեալ նախարարութիւնը, պատասխանի մ'սպասելով հանդերձ, հրաւիրած է Գատը-գիւղի մեծ այգիի տէրերն որպէս զի իւր հետ համաձայնին ձեռք առնուելիք միջոցները խորհելու համար։

Մեր կարգին կը յաւելունք թէ պէտք է անմիջական կերպով գործել արգիլելու համար այն մեծ հարուածը որ կ'սպառնայ արուեստից այս նորաբողբոջ ճիւղին, ազգու միջոցներ պէտք են ազատը կեդրոնացնելու համար, վասն զի նպաստաւոր հողմով մը, այդ սոսկալի ճճիները կրնան մինչեւ 30 քիլոմէթր տեղ յառաջանալ օրը։ Փափաքելի է որ թղթակ. հասութիւ վարչութիւնն համաձայնի Կայս. կառավարութեան հետ որպէս զի որ և է միջոց չխնայուի որթաճճին բառնալու և դեռ չճարակած այգիներն ազատելու համար։ Նոյն իսկ հանրային օգտին համար, պէտք է անխորհ բնաջինջ ընել վարակեալ այգիներն։ Անմիջական տնօրինութիւններ հակաւոր են, վասն զի եթէ անփոյթ կերպիւ վարուին և թոյլ տրուի որ ազատը ծաւալի, անհուն միասներ կրնան ծաղիլ տերութեան, երկրին և վաճառականութեան համար։ Ցարեկան 2,600,000 ոսկւոյ եկամուտ մ'է այս որ վտանգի կ'ենթարկուի։

Սուրիոյ պաշտօնական լրագիրը կը ծանուցանէ թէ գաւառին կուսակալին առաջարկութեամբ, կայս. հրաման եղած է Լաթաքիէի և Ճէպլէի միջեւ ռազմագիտական կէտի մը վրայ ընդարձակ զօրանոց մը հիմնել։ Այս զօրանոց պիտի յատկացուի այն գունդերու բնակութեան որոց գործն է հսկել ձիապալ–Սարիյէի թափառաշրջիկ հրոսախումբերուն վրայ և ի հարկին զսպել անոնց շարժումները։

Կաչէր Մէհմէտ՝ Օքէան բժշկական թերթի վերջին թիւն հաստատելով հանդերձ թէ նոր բան մը չկայ Թուրքիոյ առողջապահական վիճակին վրայ որ հետդհետէ կը լաւանայ, կը յարէ թէ Առաջի Նաւահանգստին մօտ Պոյլը–Աղնաճ գիւղի մէջ վերջերս ծագած հիւանդութիւնն զգալապէս նուազած և այս պահուս բոլորովին անհետացած լինելու է։ Այսպէս, թէ Կ. Պոլսոյ և թէ՝ գաւառաց առողջապահական վիճակն յոյժ գոհացուցիչ է։

Ներքին գործոց Նախարարութիւնը շրջաբերականաւ մը պատուիրած է որ գինուց փոխադրութեան համար անցագիրք այսուհետեւ տրուին ի Կ. Պոլիս՝ ոստիկանութեան Նախարարութեանկողմէ և ի գաւառս՝ տեղական իշխանութեաց ձեռամբ։

Ֆէնէրի յունաց մայր վարժարանի աշակերտաց մրցանակաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ այս կերակի օր, ընդ Նախագահութեան Ամեն. Բովակիմ Պարիարքի։

Վարժարանի տնօրէն Տ. Բարլամաս տարեկան զեկուցագիր մը կարդաց, որ կը յայտնէր թէ 800 է աւելի աշակերտք կը յաճախեն հոն, և կ'ուսանին հին յունարէն, լատիներէն, թուրքերէն և ֆրանսերէն լեզուներն, փիլիսոփայութիւն, բնական գիտութիւն, ընդհանուր ազգաց պատմութիւն, գծագրութիւն, ընդհանուր աշխարհագրութիւն եւայլն։ Այս տարի վիլայական ստացող չլինելուս աշակերտաց թիւն է 36։

Վարժարանին մէջ կը դասախօսեն 14 ուսուցիչք։

Պուլղարիոյ և Արեւելեան Բումէլիի մէջ կարգուած ապաստամբական մասնախումբերու տարասօրոյ տարբերներուն նկատմամբ Թէրճիմանը Հաֆէզարդի մէջ տեսնուած խմագրական երկար յօդուածի մը հետեւեալ մասը կը համառօտենք։

Մաղեդոնիոյ մէջ խռովութիւն մը հանելու համար Պուլղարիոյ և Արեւելեան Բումէլիի մէջ տեսնուած պատրաստութեանց սկզբէն ի վեր, կայսերական կառավարութիւնը չատ խոհեմ և պատուաբեր ընթացք մը բռնած է։ Կը ըսենք թէ կայս. կառավարութիւնը ծանուցած էր Պուլղարիոյ եւ Արեւելեան Բումէլիի իշխանութեանց թէ ամեն պարագայի մէջ անմիջական պատասխանատու կը ճանչէ զիրենք եւ ի հարկին երբէք եւս չ'պիտի կենայ գործադրելէ զոր ինչ արժան դատէ։ բայց որովհետեւ այդ ապստամբական մասնախմբերու դիտաւորութիւնները վերջերս գործնական երեւոյթ մը ստացած լինելով կայս. կառավարութիւնն իւր այդ ազդարարութիւնն աւելի՛ համոզիչ։։։ կերպով կրկնած էր, Արեւելեան Բումէլիի իշխանութիւնը փութացած է սահմանագլխոյն վրայ զօրք զրկելով արգիլել այդ խառնակիչաց անցուդարձն։

Թէև, կը յարէ Թուրք թերթը, տեղեկութիւն առնուած չէ թէ Պուլղարիոյ իշխանութիւնն ի՞նչ միջոցներ ձեռք առած է կայս. կառավարութեան սոյն ազդարարութեանց առթիւ, սակայն պարտի գործադրել պէտք եղածը, նկատելով որ կայսերական կառավարութեան յիշեալ յայտարարութիւնը, հետեւեալ խաղաղ վիճակի շարունակութիւնն, աւելի նպաստաւոր է Պուլղարիոյ քան մեր շահերուն։

Փիլիպէի համանուն լրագիրը կը պատմէ թէ քաղաքին բնակիչներէն 40 տարեկան Իսլամ կին մը իւր 13 տարեկան տղուն հետ անցեալ կիրակի Քրիստոնէութիւն ընդուներ է պուլղար եկեղեցւոյն մէջ։ Մկրտութեան արարողութիւնն պատասխոյր շքեղութեամբ կատարուեր է ի ներկայութեան կառավարական քանի մը պաշտօնատարաց։ Հանդիսին կը նախագահէր Տ. Կիրիլատիս պուլղար եպիսկոպոսն։ Մայրը Բաթերին կոչուեցաւ, իսկ տղան Միշ։ Եւ որպէս զի Իսլամաց կրօնական զգայուններն աւելի վիրաւորուին, այդ Մկրտութեան հանդէսը կատարուեցաւ նոյն իսկ Բամազանի առաջին օրն։ Յիշեալ լրագիրը կը յաւելու թէ նմանօրինակ պարագայից մէջ ի վաղուց հետէ գործադրուած սովորութիւններն ու պայմաններն այս անգամ երբէք գործադրուած չեն։ Իսլամ կինն ու տղան ըստ սովորութեան նախ զրկուած չեն Միւֆթիին, որ բնաւ տեղեկութիւն չունէր և եղելութիւնն իմացեր է երբ ամենայն ինչ կատարուած էր արդէն։

Թերճիմանը Հաֆէզարդ, որ կ'արտատպէ սոյն լուրն, կ'ըսէ թէ այս դէպքս առայժմ անհաւատալի կը թուի իրեն։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՏ

Այս [illegible]

ՊԱՏՊԱՆՈՂԱԿԱՆՔ ԶԵՐՏԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԻԼ

Լոնտոն, 22 յունիս

Պահպանողականաց գլխաւոր թերթն՝ Սթենտարտ և Ազգայնոց գլխաւոր թերթը՝ Տեյլի Նիւզ կը հաստատեն թէ հաւանական է որ Պ. Կլատստոն վերադառնայ յիշխանութիւն, փոփոխելով իւր Նախարարութեան կազմութիւնը։

ԱԼՖՈՆՍՕ ԹԱԳԱՒՈՐԸ ՏԵՂԻ ԿՈՒՏԱՑ

Մատրիտ, 21 յունիս

Պ. Քանովաս տէլ Քաստիլոյի Նախագահութեան ներքեւ գտնուող սպանիական Պահպանողական Նախարարութիւնն եւս առաւ զիւր հրաժարական, որովհետեւ Ալֆոնսօ թագաւորն եւս կեցաւ ի Մուրչիա երթալու և հնոսխատարներն աչքէ անցուելու մտադրութենէն, որ պատճառ եղած էր Նախարարութեան հրաժարման։—(Նախարարք կը հակառակէին Ալֆոնսօ թագաւորին հնոսխատ վարակեալ տեղեր այցելելուն, վախնալով թէ թագաւորն եւս, որ արդէն հիւանդոտ է ամեն կերպով, հնոսխատ կը բռնուէր եւ կը մեռնէր, և յայնժամ թագաւորական գերդաստանի և մինչեւ իսկ թագաւորական դրութեան փոփոխում հարկաւոր կը լինէր։ զի Ալֆոնսօ թագաւորն ծաղկահասակ աղջիկ մը միայն ունի։)

ՎԻԼՀԵԼՄ ԿՈՅՍՐ

Պերլին, 22 յունիս

Վիլհելմ Կայսրն Լամ գնաց, հանքային լուրերը մոնելու։

ՍՈՒԷԶԻ ՋՐԱՆՑԸ ՄԱՏԲՐՈՒԱԾ

Սուէզ, 22 յունիս

Սուէզի Ջրանցն, ուր աւազան նաւ մը խրած էր անցեալներն, և նաւուց անցուդարձը բոլորովին խափանած էր, մաքրուեցաւ, և երթեւեկութիւնը վերսկսաւ ըստ առաջնոյն։ (100–150 լոգենաւեր կը սպասէին անցուդարձի վերսկսման։)

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Ղալաթիա, 11 Յունիս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 ամիս Լոնտրայի վրայ պանքայի)	.....	111
3 » » » (վճռելին)	.....	109 3/8
» Բարիզ » (պանքայի)	.....	22 77 1/2
» » » (վճռելին)	.....	22 85

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՅ

Օսմանեան Քօնսոլիտ

		Դրամական
Երէկ երեկոյ գոց.	(Մինչ. Դ. Սէրի	18 25
Գլխաւորին գոցուեցաւ վերջը	»	18 24
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	18 24
Բարձրագոյն գին	»	18 25 1/2
Նուազագոյն »	»	18 24
Կէս օրին	»	18 25 1/2

ԻՍԼԻՊԻԷ ԵԳԻՊՏԱՑԻ

Երէկ իրիկուն գոցուեցաւ		71 30
Այս առաւօտ բացուեցաւ Գ. Կ.		71 30
Կէս օրին		71 30
Փոխառութիւն 1858)	Ա. Սէրի Գ. Կ. Ա. Ռ.	33 10
» 1862)		
» 1860)		
» 1863)	Բ. » » » »	49
» 1872)		
» 1865)		
» 1869)	Գ. » » » »	18 24
» 1873)		
Բումէլիի երկաթուղի	Ֆր.	43
Օպլիկատիոն տը Բրիօրիթէ	»	—
Բաժնեթուղթ Լաստիոսի	»	60

ԲԱԺՆԵՏՈՄԱՐ

Սորիէթէ ժէնէրալ	Գ. Կ.	Անգլ.	Լ.	3 20
Բրէտի ժէնէրալ	» »	Օսմ.	»	7 7
Պանք տը Գոմս	» »	»	»	4 30
Օս. Շանմ է վալէօր	» »	»	»	3 34
Թրամուէյ	» »	»	»	292 1/2

ՔԱՂԱՔԱՅ ԴՐԱՄՈՅ

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
10 ֆրանկոց	»	87 28
Անգլիական ոսկի	»	110 20
Ռօլ Իմպերիալ	»	90 10
Բրիմիզ	»	54 15
Ռուսական թղթադրամ	»	3 90
» արծաթ	»	89 30
Ֆիորին	»	9
Մէճ. արծ. (տարբ.)	»	108 1
Վենոց	»	103
Լինոցոց	»	103
Մէճիտիէ	»	98 30
Պրինձ	»	—
Թղթադրամ	»	—

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 22 Յունիս, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Անգլ. քոնսոլիտ		99 3/8
Օսմ. » Սէրի Դ. բացուեցաւ		16 18/16
» » » գոցուեցաւ		17 1/32
» » » Ա.		33 1/4
» » » Բ.		19
» » » Գ.		16 7/8
Օսմանեան 1874		67 1/2
Փոխառութիւն 1877		80
Պանք Օսմանեան		42 1/4
Ռուսական փոխառ. 1873		93
Եգիպտական միացեալ (իսլիպիէ)		64 5/8
» առանձ. (բրիմիէրիէ)		86 1/4
Տարբ Լանիէ		62
Տօսմանիա (փոխառ. Բոշիլա)		84
Հունգարական պարտութղթ 40/0		— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ		— —

Վիեննա, 22 Յունիս, ժամ 4 երեկոյ

Փոխանակութիւն Լոնտոնի վրայ	124 60
Օսմանեան երկաթուղի	20 50

Բարիզ, 22 Յունիս, ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0	110 30
» » 3 0/0	81 70
Օսմանեան քոնսոլիտ Սէրի Դ. բացուեցաւ	17 7 1/2
» » » գոցուեցաւ	17 7 1/2
» » Սէրի Բ.	18 75
» » Գ.	17
Օսմանեան երկաթուղի	42 75
» Բէտիի բաժնեթուղթք	—
Պանք Օսմանեան	561 25
Գրեքի Լիճէ	538 75
» Ֆոնսիէ	1365
Բաժնեատոմս Լիոնի	1252 50
Սուէզի ջրանցք	2191 25
Ռուսական 5 0/0 1877 ի	100 1/2
Իտալական Ռանթ	97 60
Եգիպտական միացեալ	326 25
Սպանիական (արտաքին)	60 1/8
Բրիօրիթէ Ֆոնդք	391 25
3 0/0 Հելլենական	339 37 1/2
Հ

Պարսիկ Խանը ըմբռնեց թէ իւր սուրն ու ռազմագիտական տաղանդը անզօր պիտի լինէին յաղթանակել ընդդէմ հայ Մէլիքներու, հետեւաբար հրաժարեցաւ այդ անպէտ զէնքերէն և իւր յոյսերը դրաւ խորամանգութեան վրայ։ Առանց յուսահատութեան կը խորհէր նորանոր միջոցներ, որոց շնորհիւ կարող լինէր պարարտել իրեն օթեւան մը Ղարապաղի լերանց մէջ։ Երկպառակել հինգ Մէլիքներու միաբանութիւնը, ջլատել նոցա ոյժերն, իւր դաշնակիցն ընել մին անոնցմէ, ահա՛ Փանահի յուսոյ տեսակէտը։ Եւ յուսալու իրաւունք ալ ունէր։ Տխուր անցքեր ոյք կը պատահէին այդ միջոցները Ղարապաղի մէջ, կոչուած էին խրախոյս կարդալ Փանահի։ Բայց նախ ծանօթացնենք Փանահը, Ղարապաղի անդարմանելի աղէտից այդ գլխաւոր դեւն, և ապա խօսինք սրտակուռ պատահարներու մասին։

